



Սիր Աշխարհ





Սիեր ԱՀՅԱՆ

# ՍԻՐԱՆՔ

Ստեփանակերտ

2000

## Թույլ տվեք ներկայանալ

Ես՝ Գագիկ Վլադիմիրի Զաքարյանս ծնվել եմ 1962 թվականի դեկտեմբերի 13-ին՝ ցրտաշունչ մի օր: Իմ ծննդավայրը՝ Ստեփանակերտը մի փոքրիկ ու դեռևս քիչ հայտնի քաղաք էր, որի հասարակ բնակիչներից մեկի՝ ստվրական բանվորի ընտանիքում ինձ համար օրորոցային են երգել: Մանկությունս անցել է խորհրդային կոչվող միլիոնավոր երեխաների մանկության պես, թերևս առանձնանալով մի բանով, որ մենք՝ հայ մանուկներս խաղում ու մեծանում էինք մեր ազգի ոխերին թշնամու երեխաների հետ: Բայց, խոստովանում եմ, այն ժամանակ ես չեմ ել կասկածում ու զգիտել այդ մասին: Իսկ թուրք երեխաները մի տեսակ ատելություն, թշնամանք ունեին թաքցրած իրենց հոգու խորքում, ինչն արտահայտված էր նրանց կանաչավոր աչքերում: Մենք՝ հայ երեխաներս շատ էինք ու միասնական, ուստի թուրքի լակուտները ծավոտուն չեն հանում...

1966-1977 թվականներին ստվրել եմ պրոլետարական գրող Մ.Գորկու անունը կրող թիվ 1 դպրոցում: Հովերով տարված չեմ, բանվորա զյուղացիական մեր երկրում արհեստ ունենալիք էր հարգի, ես էլ նտածում էի՝ մի մասնագիտություն ստվրելու մասին, գոնե օրվա հաց կաշխատեի: Եվ

գ.ՄԴ. 84 Հ7-5

Ա...

ԱՀՅԱՆ Մ.

Ա...: Սխրանք: Փաստագրություն, (Սիեր Ահյան), Ստեփանակերտ, 2000, 28 էջ, 14 նկար, տպաքանակը՝ 1000:

Գրքույկը, իրադարձությունների համայնապատկերի վրա, ներկայացնում է Արցախյան պատերազմի նահատակ Գագիկ Զաքարյանի կյանքը ու գործունեությունը, հայրենանվեր մաքառումները:

ահա 1977-1980 թվականներին մասնագիտական-տեխնիկական ուսումնարանում ուսումնառության տարիներին սովորեցի փականագործի մասնագիտություն: Մինչև ծառայությունը հասցրել եմ աշխատել, իմանալ սեփական քրտինքով վաստակածի գիճը, բերկրանք ապրել... Չինվորական ծառայությունս անցել է Գերմանիայում տեղակայված նախկին խորհրդային բանակի խմբավորումում, հիմնականում որպես վարորդ: Ծարունակել եմ մերենա վարել նաև զորացրվելուց հետո:

Մասնագիտական-տեխնիկական ուսումնարանում 1984-1986թթ. ձեռք բերեցի խոհարարի մասնագիտություն: 1984-ին ամուսնացած և Երինա Մուսայելյանի հետ ապրեցի մոտ 9 տարիների ամուսնական խաղաղ ու համերաշխ կյանք, ուսեցանք 2 տղա և 1 աղջիկ: Ես նրանց ցավը տանեմ... Ամեն անգամ մարտի նետվելիս երեխեքս էին աշքիս առաջ. համոզված էի, որ այդ մարտի ելքից էլ կախված է նրանց ապագան... Այդպես, քայլ առ քայլ, օր-օրի մնենք վանեցինք նահն ու վտանգը մեր սիրասուն երեխաներից, մեր օջախներից, մեր հայրենի սահմաններից...

1986-1992թթ. աշխատել եմ հասարակական սննդի միավորումում որպես գործակատար: 1992 թվականին, հունվարին էր կարծեմ, կամավոր մտել եմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ինքնապաշտպանության ուժերի շարքերը: Մասնակցել

եմ Խոջալուի, Դահրազի, Ջյոսալարի, Շուշիի ճակատամարտերին: Այնուհետև, մեկնել եմ Մարտակերտի շրջան, մեր համընդհանուր ցավն ու ողբերգությունը մեղմելու համար: Չլրանում, Հարույրունագոմերում, Դրմբոնում վատ չեմ դրսորել ինձ, արժանանալով հրամանատարության ուշադրությանը: Ինձ լեյտենանտի կոչում շնորհվեց ու նշանակվեցի 3-րդ գումարտակի 7-րդ վաշտի դասակներից մեկի հրամանատար: Վստահությունը մեծ էր, պետք էր այն արդարացնել, ուստի պարտքի ու պատասխանատվության մեծ զգացումով ձեռնանուխ եղա առաջադրված խնդիրների լուծմանը: Միշտ դասակի տղաների հետ էի, ինձ բվում էր առանց ինձ կորուստ կունենանք և դա երբեք իմ խոճին հաճախստ չէր տա...

Ընդհանրապես, 3-րդ գումարտակը լավ էր կովում, ուր էլ որ հասնելու լիներ, թշնամին գլխակորույս փախուստի էր դիմում: Եվ դրանում թիվ չէր դասակի քաջամարտիկների ավանդը: Հա, մի դիպված հիշեցի: Շուանի պահակակետերում էինք: Զյուն էր, սառնամանիք: Թուրքերն էլ հա խփում ու խփում էին... Իհարկե, հեռվից: Ջիք ցույց տային, տեղն ու տեղը կզարկենք: Սի հրաշքով տուն հասա, մի քանի ժամով, Իրինան թե՝ մեկ-երկու օր մնա երեխերի մոտ, քեզնից կարուտներս առնենք, համ՝ դր էլ ես մեղք, գոնեն մի քիչ կիանգստանաս: Ի՞նչ պատասխանեի: Ես հասկանում էի նրան, քայց դե

ո՞նց կարող էի հանգստի մասին մտածել, եթե իմ մարտընկերները դիբում, սառնամանիքի ու թշնամու գնդակի բերանին կանգնած են: Ներիշի ինձ, իրա, բայց ընկերներիս ես չէի կարող դաշտանել:

1993թ. մարտի 23-ի երեկոն անմոռաց է... Ըստանիքիս ու ընկերներիս հետ հացի էի նստել: Թեև ինձ լավ չէի զգում, տկար էի, բայց ջանում էի ցույց շտավ: Բայց դե իրան հո նկատեց: Ասես հենց մի առիթի էր սպասում՝ հորդորելու մնալ տաճը, բուժվել, ապաքինվել, որից հետո՝ մարտադաշտը կա ու կա... Բայց կորիվն, ավաղ, չի սպասում: Եթե ամենքս մեր անձնականի մասին մտածեինք, էլ ո՞վ թշնամուն կհալածեր մեր հանրապետությունից անդին... Այդ հավատամքով էլ մենքնեցի ազատազրկող Մարտակերտ, սակայն մարտի 28-ի մարտը Հեռուստաաշտարակի բարձունքում շատ դժվար էր, առաջադրանքի կատարումը զրիեր ու արյուն էր պահանջում... Երիտասարդ տղաներ կային, նըրանց խնայել էր պետք, իսկ ես արդեն 30-րդ գարունն էի բոլորել... Զեռքից ձեռք անցնող բարձունքը, այնուամենայնիվ հնազանդվեց, ես արդեն այնտեղ եմ, տղե՞րք, հասեք... Սակայն, թշնամու գնդակն ավելի շուտ հասավ ինձ...



Այցելուին անքար հայացքով դիմավորում է պատի մեծադիր լուսանկարը: Համակրելի դեմքը, հեռուս նայող աչքերը հուշում են նրա անհուն հավատի և աննկուն կամքի մասին: Զավակներից միայն առաջնեկը՝ Էրիկն է հիշում նրան: Մյուս երկուս՝ Էլինան ու Էդրիարդը, բոլորովին վերջերս են հասկացել, որ պատի նկարից անքարը նայողը իրենց հայրն է՝ Գագիկ Զաքարյանը: Նատալյա տատիկն է պատմել, որ նա կովել է քուրք զավթիչների դեմ, թույլ շտալով նրանց պղծել մեր հողը, խանգարել ձեր անհոգ ու անուշ քունը... Գիտեն արդեն, որ հայրը նաև իրենց խաղաղ երազների, լուսաղող ապագայի համար է գնացել ձուլվելու հավերժի ճամփորդներին: Այդ առաջ էր, որ զարմանում էին, թե ինչու հայրիկը տուն չի դառնում կամ տատիկը թաքուն արտավում է, նրա անկյունի թարմ ծաղկների ջուրը շարունակ փոխում, որ չքոշնեն...

Էրիկի աչքերի առաջ դեռ այն անմոռաց երեկոն է, եթե ազատամարտիկ հայրը տուն եկավ, ինքնաձիգ զենքը կախեց պատից և մեկ-մեկ զրկելով ու գորովալից համբուրելով իրենց, հարցրեց.

- Ապա մի ցույց տուր, բայիկս, ո՞նց եք մեծանում առանց ինձ:
- Այ, էսպես, - թեկերը տարածեց Էրիկը:

- Մեծացեք, բալիկներս, ոտքի կանգնեք, ես նաև ձեզ ու ճեր խաղաղ օրվա ու երջանիկ ապագայի համար եմ զենք վերցրել...

Սիրասուն կինը՝ Իրիման, որ հուզմունքով դիսում էր այս ամենը, դիմեց ամուսնուն.

- Ելի մի օրո՞վ ես եկել, Գագիկ:

- Այլ կերպ հնարավոր չէ, Իրա, առավոտյան զորամասում պիտի լինեմ: Գիտե՞ս, դժվարին տեղ ենք կովում, զիշեր-ցերեկ մարտեր ենք մղում: Բայց, հոգ չէ, թշնամուն արդեն ընկճել ենք, ևս մի երկու հակահարված էլ որ հասցնենք, Արցախը լրիվ ազատ կլինի:

Երկար ու խրթին էր ազատամարտիկ Գագիկ Զաքարյանի մարտական ուղին: Նա վախի զգացում չուներ: Մահապարտի համառությամբ միշտ առաջինն էր մարտի նետվում: Հաճախ էր նա մոլորության մեջ զցում թշնամուն և ապահովում անակնկալ հաջողությունը: Մարտական մկրտությունը նա ստացավ Խոջալուի ազատագրման մարտում: Շուշիի ազատագրման ժամանակ Գագիկը Զանհասանի ուղղությունում էր կովում: Ելման թնագծերում պառկած, տղաները սպասում էին զրոհի հրամաններ: Ընկերներից մեկը Զանհասան կոչվածի անցյալից էր պատմում: Գագիկն առաջին անգամ էր լսում, որ այս մինչև 1960-ական թվականները հայկական թնակավայր էր և կոչվում էր Զալալաշեն՝ Խաչենի Հասան Զալալ Դոլա մեծ իշխա-

նի անվամբ: Մուր էր, չեր երևում, բայց մարտընկերը հավաստիացնում էր, որ գյուղի գերեզմանոցը մի բաց բանգարան է, իր վիմագիր տապանաքարերով ու խաչքարերով: Իսկ ավերակված եկեղեցին Արցախի մայր տաճարի՝ Գանձասարի հասակակիցն է: Սիա և տրվեց բաղձալի ազդանշանը: Մարտը սկսվեց: Նախանշված կրակակետերի ուղղությամբ հրազենային կրակի հեղեղ տեղաց: Լավ դիրքավորված թշնամին պատասխանում ու խանգարում էր հայ ազատամարտիկների առաջխաղացմանը: Լաշինից ու Ջելքաջարից այստեղ եկած խաշնարածները՝ թուրքացած քրդեր և վաչկատուն մահմեդականներ էին, գանձ գտած գողի պես պատրաստ էին մեռնել, բայց չըողնել գյուղը:

- Յուղոտ պատառ են ճամկել, ինչպե՞ս բաց թողնեն,- Գագիկը մեկն հիշեց ջամլվեցի Ռուրեն քեռու ասածը, որը եկել-միացել էր երիտասարդ մարտիկներին և գգուում էր անձամբ մասնակցել հայրենի գյուղի ազատագրմանը:

Թուրքերի կույր համառությունից զարմացած, Գագիկը հնար էր որոնում թշնամու հախից գալու համար: Նա առաջարկեց տղաներին ժամանակավորապես հետ քաշվել, իբր նահանջում են, որ թշնամին կարծի, թե հրաժարվել են գյուղը կրվով վերցնելու նոտարությունից: Պետք է լուսադիմին կրկնապատկված եռանդրով սկսել գրոհը, անհրաժեշտ է հրի մատ նել կրակակետերի վերածված մի


քանի տուն և անել ամեն ինչ պաշտպանության առաջին գծի ասկյարների դիմադրությունը կոտրելու, փախուստի մատնելու համար, ինչը համընդհանուր խուճապ կստեղծի նաև ամբողջ զյուղում, - իր մտահղացումը պարզաբանեց Գագիկը:

Սակայն, դեռևս բաց էին մնում թշնամու հրետանու քանակի, նրա տեղի ու քողարկազերծման հարցերը: Գագիկն առաջարկեց նաև դրանց լուծման եղանակը:

«Այս գիշեր, տղերք, մենք պետք է մեր պաշտպանությունում խորացած թշնամական այս վառված տանկը քարշ տանք ու դուրս քերենք տեսանելի մի վայր, կեղծ քողարկենք և թշնամու ուշադրությունը հրավիրենք այդ նշանակետի վրա»:

Լուսադեմին գրոհը սկսվեց: Թշնամին հրետանային կրակի տակ առավ «քողարկված տանկը»: «Գործեց» Գագիկի հնարամտությունը: Այն, քուրքը հրետանի ուներ, միլիցիայի հատուկ նշանակության ջոկատի արնախումները ձեռնունայն չէին ժամանել այստեղ: Գագիկի առաջարկը դրական արդյունք տվեց նաև այն առումով, որ թշնամին երկար գրանդապ էր «հայկական տանկի ոչընչացմամբ», հնարավորություն տալով մեր տղաներին ելնել գրոհի: Մերոնք գործի դրին «Փազոտ» կայանքը, լուցկու պես բոցավառվեց հակառակորդի գրահամերենան: Հետևեցին նոր պայքարուններ, կրակն անցավ մոտակա տներին: Սարսափահար ու գոռող









թշնամին ճողովրում էր, բաքնվելու տեղ անգամ չգտնելով: Թիկունքում սկիզբ առած այդ խառնաշփորն ազդեց առաջնազծի խրամատներում համառողների վրա, որն ընկավ, որը փախսավ... Վաշտը սեպվել էր թշնամու դասավորության խորքերը: Կեսօրին գյուղում այլևս թուրք չէր մնացել, Զանհասանն ազատագրված էր... Հրամանատարը հատուկ շնորհակալություն հայտնեց Գագիկին, գովեց նրա հնարամտությունն ու անձնվիրությունը...

1992 թ. սեպտեմբերին Վաշտը մտավ նոր կազմավորվող Կենտրոնական պաշտպանական շրջանի թիվ 3 հրածային գումարտակի կազմի մեջ: Դահրազի մոտ էր: Գագիկը ռադիոկապով լսեց, որ թուրքերը մեծ ուժերով գրոհի են անցել: Կերակուրը թողեց կիսաեփ և շտապեց առաջին զիժ: Եկավ ու միացավ կովող տղաներին: Նրա երեալը ոգեսրեց ընկերներին. «Ոտք բարի է, որ գալիս է, հաջողություն ենք ունենում»: Այդպես եղավ նաև այս անգամ. թուրքերին դուրս քշեցին խրամատներից, նրանց ստիճանացին խուճապահար ճողովրել՝ մարտադաշտում թողնելով անգամ դիակներ ու գենքեր: Քանից Գագիկը դիմել էր վաշտի ու գումարտակի հրամանատարներին, խընդրելով իրեն ազատել խոհարարի պարտականություններից և ուղարկել առաջին զիժ:

- Անկեղծ եմ ասում, շերեվը կտամ նրան, ում կամենաք: Ես զենքով եմ ուզում կովել ու վրեժս առնել

ընկած մարտիկների համար: Եթե ես դա չանեմ, ինքը իմ շեմ ների:

- Զարմանալի տղա էր մեր Գագիկը, նրա մասին պատմում է մարտիկներից մեկը, քայլս էինք ճաշի, խոհարարը չկա, հարցնում ենք՝ ուր է Գագիկը, իսկ օգնականը թե՝ նախաճաշից ի վեր չկա, 7-րդ վաշտի տղաների հետ գրոհի է գնացել, ասելով՝ Էսօր կամ մի բուրք պիտի սպանեմ կամ գերի պիտի բերեմ: Վերադարձավ բավկական ուշ և պատվի բռնած զեկուցեց՝ խոստում կատարեցի՝ երկու ասկյար գետնին գլորեցի:

Դիրքերում հաճախ էին զինվորները ճաշակում Գագիկի պատրաստած համեղ կերակուրները, իսկ երբ հաղթանակ էին տանում, անպայման պետք է խորովածով նշեին: Իսկ Գագիկը խորոված անելու վարպետ էր: Այդուհանդերձ նրա ուշքն ու միտքը առաջին գծում, մարտընկերների հետ էին: Ի վերջո, Դահրապի պաշտպանությունում և այլուր աշքի ընկած Գագիկը նշանակվեց դասակի հրամանատար, նրան շնորհվեց լեյտենանտի զինվորական կոչում: Լաշինի մարդասիրական միջանցքի պաշտպանությունը Գագիկի համար ևս պատվի ու գոյի խնդիր էր:

Կոչումը և պաշտոնը չփոխեցին Գագիկի բնավորությունը, նա մնաց նույն համեստ ու հասարակ անձնավորությունը, ավելի լրջացավ, զինվորների նկատմամբ դարձավ ավելի ուշադիր ու հոգա-

տար, ամենաշատը մտածում էր կարգուկանոնի, անտեղի կորուստներ չտալու նասին: Հաճախ էր կրկնում.

-Պետք է զարդել թշնամուն և խնայել սեփական կյանքը, մենք մեկ օրվա ու մի տարվա համար չենք, այլ՝ վաղվա, մեր տուն և օջախի, մեր երեխաների համար:

Օր-օրի թեժանում էին մարտերը: Արցախի ինքնապաշտպանության ուժերի հարվածների տակ թշնամին հարկադրված էր նահանջել: Բայց Մարտակերտի մատուցներում դիմադրությունն ուժեղացավ: Մեծ դժվարություններ հաղթահարելով մեր քաջազունները ճեղքում էին թշնամու պաշտպանության գիծը, կասեցնում հակագրոհները և ստիպում ազտեղ զավթած բնակավայրերը: Հեռուստաաշտարակի բարձունքից Մարտակերտ քաղաքը ոնց որ ափի մեջ: Պետք էր նվաճել բարձունքը և գրոհել քաղաքը... Տղաները պատրաստ էին կատարել մարտական առաջադրանքը:

1993թ. մարտի 28-ի առավոտյան Գագիկը մի փունջ ձնծաղիկ ձեռքին, մոտեցավ մարտընկերներին:

- Տղերք, այս անգամ վերադարձին ձնծաղիկներ պիտի տանեմ երեք բալիկներիս համար՝ ազատագրված մայր հողի ու նորովի բացված գարնան այդ ավետարեները, - ասաց, հոտ քաշեց և ապա շարունակեց, - հողն այս զարնանը հաստատ ազատ ու

հպարտ կշնչի, ազատ կծաղկեն ծառերը, դրանից մեծ երջանկություն չկա...

Գագիկի խոսքն ընդհատեց թշնամու “Գլրադ” կայանքի կաղկանձը: Թշնամին պինդ էր նըստել Ներքին Հռոարադի բարձունքներում: Լեյտենանտ Գագիկ Զաքարյանը, ճնծաղիկի փունջը զրլիսարկին ամրացնելով, կարգադրեց իր դասակի մարտիկներին հետևել իրեն: Հարձակման անցավ գումարտակը, 7-րդ վաշտը ու նրա կազմում՝ Գագիկ Զաքարյանի դասակը: Շանապարի չկար, հսկա քարարեկորներ էին, անմատչելի քարափներ: Տղաներն առաջանում էին՝ մարտելով ու մազցելով: Գագիկը ճեղը ու անցույի էր փնտրում թշնամու պաշտպանության զիծը հատելու և բարձունքն ազատազելու համար: Գտնելով այն, Գագիկը իրեն հետևելու ազդանշան տվեց տղաներին: Թշնամին դրան չեր սպասում: Գրոհի ելավ ամրող գումարտակը, ճարճատում էին զնդացիրներն ու ինքնաձիգները, քարախորշերում խոլ պայքում էին նոնակները: Մարտերը զնալով թեժանում էին: Հայ հրետանավորները լրեցնում էին թշնամու մարտկոցները, բայց թուրքներն այլ տեղերից էին շարունակում կրակի հեղեղ քափել գրոհող տղաների վրա:

—Տղերք, ես զնացի, մարտի դաշտում երկու տեսակ մահ չի լինում, եթե այսօր դրանց չքշենք, վաղը կարող են հզորանալ... տեղները տաք է, դրա համար

չեն ուզում բողնել իրենց որչերը, - ասաց Գագիկը ու առյուծի պես նետվեց առաջ: Նա ընդհուար մոտեցավ թշնամու խրամատին և իրար հետևից երեք նոնակ նետեց: Որջն ավերված էր: Թուրքերը դես ու դեն ընկան, բարձնվեցին, փախսան, շատերն էլ ջհանդամի գիրկն ընկան: Հակառակորդի դիմադրությունը աստիճանաբար թուլացավ, դադարեցին կրակահերթերը: Բարձունքը նվաճված էր: Բարձունքի վրա Գագիկն էր: Նա ազատարարի հպարտությամբ սկսեց դիտել ճերմակին տվող քաղաքը՝ ահա մշակույթի տունը, նորակառույց հիվանդանոցը, դպրոցները... Թշնամին չեր ավերել քաղաքը, հույս փայփայելով, որ այն կմնա իրեն:

Դադարը, սակայն, խարուսիկ էր: Թշնամին վերստին գրոհի անցավ, անպայման բարձունքը հետ գրավելու մոլուցըով:

— Չէ, չի լինի, չենք տա, - ասաց Գագիկը ու սկսեց կասեցնել թշնամու առաջխաղացումը: Տարերի մեջ էր ամբողջ գումարտակը: Բարձունքը ձեռքից ձեռք անցավ, բայց, ի վերջո, մնաց անառիկ: Մնաց անառիկ, բայց թաճկ զնով... Իր գրաված բարձունքի վրա թշնամու դպրանակալ զնդակից զոհվեց նաև դասակի հրամանատարը՝ Գագիկ Զաքարյանը, անուն, որ հավերժ կրեածի բարձունքների վրա...\*

\* Օգտագործվել են Գ. Բեգլարյանի «Պսակ» գրքի (էջ 143-145) և Ա. Դանիելյանի «Նա ընկավ գրաված բարձունքի վրա» հոդվածի («Մարտիկ» թ. 34, 1995 թ.) տվյալները:

## Գագիկը կնոջ հուշերում

Իրան ամուսնու հետ կապված հուշերով է ապրում: Իր այդ զերմ ապրումներով նա վարակել է նաև Երեխաներին: Եվ Գագիկը բացակա է սոսկ մարմնապես, բայց հազարավոր անտես թելերով կապված է ընտանիքի յուրաքանչյուր անդամի հետ, նրա պատգամներն ու խորհուրդներն են ուղեկցում նրանց ամեն մի քայլափոխի: «Գագիկը սիրեց ուազմի գործը, որոշել էր զենքը վայր չդնել անգամ պատերազմի ավարտից հետո և դառնալ կաղրային զինվորական սպա, - հիշում է Իրան և հոգոց հանում, հիմա՝ ու՞ր էր, թե ողջ մնար, մեր բանակին շատ օգտակար կլիներ»: Այդուհանդերձ, Իրան զբաղեցրեց ամուսնու տեղը Պաշտպանության Բանակի շարքերում և 1994 թվականից ի վեր ծառայում է՝ ամուսնու կիսաստ բողած գործը շարունակելու և հաղթական ավարտին հասցնելու վճռականությամբ: Նա մտադրվել է չհանել զինվորական համազգեստը մինչև բանակ զորակոչվի ավագ որդին, որն արժանի հերթափոխ կլինի, քանզի այդամի դաստիարակություն էր ստացել, և դա էր Արցախյան պատերազմի գլխավոր դասը ու իր հոր մահվան խորհուրդը...

- Երեխաների հետ շա՞տ էր կապված, աշքի առաջ միշտ նրանք էին, - շարունակում է կինը և հազիկ նշարելի ժպտում, հիշելով մի զվարճալի

դեպք. զանգում էր վաշտի հրամանատարը ու թե՝ Գագիկ, երեխոցը հավաքի, շտապ արի: Գագիկը կատակով, իբր չէր հասկացել, որ խոսքը դասակի տղաների մասին է, ասում էր, թե իմ երեխսերը քնած են և, այդպես բարձր տրամադրությամբ էլ առաջնորդում էր դասակը մարտի:

Վերջին անգամ ընկերներով նստել էին մեր տանը, ժենզյալով հաց էին ճաշակում և ուրախ տրամադրությամբ էլ զնացին Մարտակերտի ուազմաճակատ: Գագիկը հոգեբանորեն հաղթահարել էր մահվան զգացումը, դեռ ավելին՝ չէր հավատում, որ բուրքն ի վիճակի է իրեն սպանել: Նա մտածում էր, որ եթե ինքը հանկարծ մի օր բացակայեր առաջին զծից, ապա պատերազմը տանուլ կտանք:

1993թ. մարտի 12-ին էր: Վաշտի հրամանատար Անդրանիկ Գասպարյանը հեռախոսազանգով տեղեկացրեց, որ պետք է զնանք ուազմաճակատ: Երկու օր հետո իմ ծննդյան օրն էր, մի կերպ համոզեցի Գագիկին մնալ և դա կլիներ ամենաքանակարժեք նվերը... Անդրանիկը մեկնեց առանց Գագիկի... Դժբախտաբար, 13-ի գիշերը Անդրանիկի դին բերեցին: Մարտի 15-ին հուլարկավորեցինք Անդրանիկին: Ծանր, ճնշող մթնոլորտ էր: Ցավն ավելի անտանելի ու վիշտն ավելի անսփոփ էր դառնում, քանզի Անդրանիկին հողին էինք հանձնում իր ծննդյան օրը...

Մարտական ընկերոջ կորուստը շատ ծանր

տարավ նաև Գագիկը: Նա շարունակ մեղադրում էր ինձ, որ եքեւ չմնայի, Անդրանիկի կողքին լինեի, գուցեւ դժբախտությունը հնարավոր լիներ կանխել: Մակայն, ինքն էլ հավատում էր, որ ճակատազրից չես խուսափի: Այն դաժան գտնվեց ու չխնայեց նաև Գագիկին:

Մարտի 28-ին, կիրակի օրը, մարտեր ծավալվեցին Մարտակերտ քաղաքի վրա գերիշխող հեռուստաաշտարակի բարձունքի համար: Այն ձեռքից ձեռք էր անցնում: Այդ օրը Գագիկը գնդացրով էր կրպում: Մարտընկերների վրեմք սրբում նա անընդհատ կրկնում էր. «Թուրքի մերը կլացացնեմ...»: Երբ Գագիկն արդեն բարձունքում էր, մի պահ խզվում է կապը նրա հետ: Գումարտակի հրամանատար Արարատ Ղազարյանը ռադիոկապով կանչում էր Գագիկին ու պատասխան չեր ստանում: Արարատը սողեսող մոտենում է արյան մեջ կորած Գագիկին, քափահարում և կանչում է, սակայն Գագիկը միայն անհասկանալի մի բառ է ասում ու հավերժորեն փակում ծանրացած կոպերը...

- Այդ շարաբաստիկ օրը խիստ անհանգիստ էի, - վերիշում է Իրան, - հոսպիտալում էի և անընդհատ հետաքրքրում էի ճակատում տիրող կացությամբ... Ասում էին, թե նա վիրավորվել է ու նորից է մարտի դուրս եկել: Դա ինձ շատ արժանահավատ թվաց, այո, Գագիկը դա կաներ, և

մի փոքր հանգստացել էի: Հետո ասացին, որ վիրավոր Գագիկին կրերեն ուղղարիոով... Եվ այդպես, մի ամբողջ օր ինձնից գաղտնի պահեցին նրա նահատակվելու լուրը... մինչև մարտի 29-ի առավոտյան նրա դիմ բերեցին տուն... Երբ նրան տեսադագաղում, ասես երկնակամարը փուլ եկավ գրլիսիս... Հիշեցի նրա բազմիցս տրված հարցը. «Իրա, ինչ կանես, որ համեկարծ ինձ բերեն»: Ես հասկաց, որ նա ինձ հոգերանորեն նախապատրաստում էր վատրարագույնին: Հորդող արցունքների մեջից սարսափով զգացի, որ ես սպասում էի, որ անխուսափելի էր այդ դժբախտությունը... Այս, դաժան է հնչում, սակայն պատերազմական օրենքները թելադրում են իրենցը և ոչինչ անել չես կարող...

Մեծ որդիս՝ Երիկը շատ է ազդվել, բայց ամեն ինչ անում է հոր բացակայությունը մեղմելու համար: Զգում է տան հոգաք տանել իր վիշրուն ուսերին: Փոքրիկ տնամերձ այգի է մշակում, աշխատում է տան բոլոր գործերն անել... Ես զգում եմ և հավատացած եմ, որ Երիկը կլինի իր հոր արժանի զավակը և վստահարար կրոնի նրա տեղը...

Գագիկի երազանքն էր դստերը երաժշտական կրթության տալ, նույնիսկ Էլինայի համար դաշնամուր էր գնել: Էլինան սովորեց մեկ դասարան, սակայն այլևս չեր հասցնում այցելել պարապմունքներին ... Հաճախ հանդիմանում եմ, որ ինչո՞ւ հոր մուրազը չի ուզում իրականացնել, ասում եմ՝ չէ՝

որ հայրի ուզում էր, որ դու նվագես, իսկ ինքը լսելով, սեղան նստեր ու վայելեր երաժշտության բերկրանքը: Էլինան տիսուր հարցնում է. «Այսր, ու՞ր է հայրիկը, որ լսի իմ նվազքը»: Հոր մահը սպանել է նաև երեխայի նվագելու ձգտումը...

Եղուարդը միայն մի բան է իիշում, թե ինչպես հայրն ու մայրը միասին մահճակալն էին տեղափոխում, իսկ ինքը զնում էր նրանց հետևկից, ել՝ ոչինչ... Սակայն հիմա Եղուարդի համար հայրը վեհ գաղափար է, հերոսականության ու անձնը-վիրության խորհրդանշից, ոգեշնչման ու ներքին մը-ղումի աղբյուր... Հպարտ է Եղուարդը, որ իր հայրը հերոս է, կյանքն անզամ չի խնայել խաղաղ այսօրվա, մանկական վառվոռն երազմերի իրականացման համար: Գագիկը հավատում էր, որ թը-նամուն կհաղթենք և քուրքի մոլուցքը հասնել Ստեփանակերտ՝ այդպես էլ կմնա որպես չիրականացված մի զառանցանք: Ամենածանր օրերին անզամ, երբ հրբիռահրետանային կրակին ավելացան օդային հարձակումները, Գագիկը ընտանիքը Ստեփանակերտից հանելու մասին անզամ չէր մտածում: «Եթե մեռնելու ենք, քող միասին մեռնենք, բայց մեր օջախը չենք լրի,- ասում էր նա»: Եվ մեր ներկայությունն անհրաժեշտ էր, մենք թև ու թիկունք ենք դարձել մեր ընտանիքի մարտնչող հորը... Նա նաև չէր սիրում և չէր քողմում իշնենք նկուղ, հրետակոծության ժամանակ ասում էր՝ ոչինչ



ել չի լինի... Այս, իրականում մեզ հետ ոչինչ չեղավ, իսկ ինքն էլ նահատակվեց առաջին գծում, իր իսկ գրաված բարձունքի վրա:

Ճ

Փաստավավերագրական իրատարակություն

Սիեր Ահյան

## Ս Խ Ր Ա Ն Ք

(փաստագրություն)

Խմբագիր՝ Ա. Գրիգորյան  
Նկարիչ՝ Լ. Քոչարյան  
Սրբագրիչ՝ Մ. Սարգսյան  
Համակարգչային շարվածքը՝  
Լ. Խաչատրյանի  
Եջալիրումը՝ Կ. Բղոյանի

Տպագրությունը՝  
Թուլբ՝  
Զափուր՝  
Տառատեսակը՝  
Տպաքանակը՝

օֆսեր:  
օֆսեր:  
30x42, 1/16:  
«Times Armenian»:  
1000:

ԸՆԴՈՒՆԵԼ ՈՐՊԵՍ ՆՎԵՐ



Հայր իմ, ներիք.

Դուն գիտելու սեղմութ է բառերից պես՝  
ես մղելով ցուրտ ու քամին:

Հայր իմ, ների՞ր...

Ես քո միտքը շփորելով գնդակի հետ՝  
խփել եմ ու... անմեղ ծառի ճյուղը ջարդել...  
Քո ազգանվան ակոսներում շարժվող սերմն եմ,  
աշքիս լուսում կա տար մոխիր ու մի տաճար,  
և տաճարի շնձից ծգոյն անրուն կածան,  
որով հոգնած պապս է անցել...

Այս աշխարհին ես կապվել եմ քո... Ժայտուվ,  
հայր իմ, պարզի ինձ քո ծեռը, ես մանուկ եմ,  
և նորիս մեջ դեռ ճողովն է սահմակը իին  
ու չի գտնում մի պատառ ձյուն...

Ա. Եսայան

